Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2023 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է:

Շուրջ երեք տասնյակ գիտական, վերլուծական հոդվածների և 3 մենագրության հեղինակ է:

https://orcid.org/0000-0001-9014-5892

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ.
ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-108

*Սկիզբը՝ նախորդ համարներում**

Դիվանագիտության մեջ չկան մշտական դաշնակիցներ, կան մշտական շահեր:

Ուինսթոն Չերչիլ

Հիմնաբառեր. *Կիլիկիայի թագավորություն, պետական կարգ, քաղաքական դավանանք (դոկտրին), ռազմական հայեցակարգ, արտաքին քաղաքականություն, դիվանագիտություն*

Կիլիկիայի իշխանապետությունը (ապա նաև թագավորությունը) ինչպես քաղաքական դավանանքով, այնպես էլ վարվող արտաքին և ներքին քաղաքականությամբ ուսումնասիրության ուշագրավ օրինակ է: Գտնվելով տարածաշրջանային ակտիվ գոտում ու օբյեկտիվորեն հարակա թշնամական միջավայրում՝ և՛ պետական կառուցվածքի սկզբունքների, և՛ ռազմաքաղաքական, վարչական ու տնտեսական առումներով, այն կրում էր Արևելքի և Արևմուտքի համակցված ազդեցությունը: Պետության կառավարման կենտրոնն արքունիքն էր, որը ներառում էր Պարոնների խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը և գործադիր մարմինն իր գործակալություններով: Կիլիկյան իշխանապետության ժամանակ արքունիքը գլխավորում էր հայոց իշխանը, իսկ 1198 թվականից՝ հայոց թագավորը: Հայոց թագավորը, որպես պետության գլուխ և երկրի գերագույն տեր, օժտված էր բացառիկ իրավունքով ու առանձնաշնորհով: Նրա նախագահությամբ գումարվում էին Պարոնների խորհրդի նիստերը, որոնց վճիռները, ինչպես նաև օրենքները վավերացվում և հրապարակվում էին իր իսկ անունից: Կիլիկիայի թագավորը զորքերի գլխավոր հրամանատարն էր, կարող էր հայտարարել պատերազմ, կնքել հաշտության ու համագործակցության պայմանագրեր: Ըստ էության, նա միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների թելադրողն էր:

Հոդվածաշարի չորրորդ մասում փորձել ենք վերլուծել Կիլիկիայի իշխանապետության/թագավորու-

---

* *«Ամբերդ» Տեղեկագիր 2023/1 (20), https://asue.am/upload/files/amberd/2023-year-1/12.pdf*

2023/2 (21), https://asue.am/upload/files/amberd/2023-year-2/15.pdf, 2023/3 (22), https://asue.am/upload/files/amberd/2023-year-3/11.pdf

թյան արտաքին քաղաքականության սկզբունքները՝ ներառյալ ռազմաքաղաքական հայեցակարգը:

Արտաքին քաղաքականության և ռազմաքաղաքական հայեցակարգերը

Թագավորությունները որևէ պարագայում հենց այնպես չեն ստեղծվում: Հայկական Կիլիկիայի դեպքում իշխանապետությունն ամուր հիմք ապահովեց թագավորության վերակերտման համար: Այս գործընթացի վրա հիմնական ներազդող գործոնն արտաքին քաղաքականության և ռազմաքաղաքական հայեցակարգերի միահյուսված բաղադրիչն է, որի կշռի բարձրացումն ու արդյունավետ ազդեցության չափի ճշգրիտ հաշվարկը Կիլիկիայի թագավորությանը հնարավորություն տվեցին կայանալու և պատշաճ կերպով ներկայանալու մերձավորարևելյան ոչ այնքան հանդարտ տարածաշրջանում՝ որպես կարևոր դերակատարում ունեցող «խաղացող»:

Ինքնին հասկանալի է, որ պետություն կառավարման հիմնական սկզբունքների ձևավորման նպատակով նոր «հեծանիվ» չէր հորինվելու, և պետականակերտման համար հենք էր հանդիսանալու և՛ բյուզանդական, և՛ արևմտաեվրոպական դրական փորձը: Բյուզանդական փորձն ընդունելի էր այնքանով, որքանով տվյալ կայսրության կառավարման տարբեր օղակներում պաշտոնավարում էին իրենց գործին գիտակ մի շարք հայ գործիչներ, որոնք արտաքին ու ներքին քաղաքատնտեսական հարաբերությունների մշակույթի կրողն էին: Նույն կերպ, արևմտաեվրոպական փորձն ընկալելի էր, քանի որ բազմաթիվ հայ պաշտոնյաներ հակված էին համապատասխան պետական կառուցվածքի ձևավորման կողմը՝ գործնականում ծանոթ լինելով դրա հիմնական սկզբունքներին:

Թեև թագավորը պետության կառավարման կենտրոնի՝ արքունիքի «գլխավոր կառավարիչն» էր, այդուհանդերձ, երկրի կենսագործունեության առումով, կարևոր դերակատարում ունեին խորհրդատվական ու արքայական որոշումների նախագծերը քննարկող ու գործադրող մարմինները: Կիլիկիայի թագավորության «օրենսդիր» օժանդակ միավորը Պարոնների խորհուրդն էր[1], որը քննարկում էր այն վճռորոշ որոշումներն ու օրենքները, որոնք հաստատվում էին Տիրակալի կողմից, որն էլ այդ խորհրդի նիստերի նախագահն էր: Գործադիր մարմնի հիմնական դերակատարը Հայոց բանակն էր, որը թեպետ ուներ զորավար, սակայն պատերազմական գործողությունների ժամանակ այդ դերը փոխանցվում էր երկրի թագավորին՝ որպես գլխավոր հրամանատարի, որն էլ կարող էր հայտարարել պատերազմ ու պատասխանատվություն կրել դրա վերջնարդյունքի համար: Միաժամանակ, գործադիր մարմինը բաղկացած էր մի շարք գործակալություններից, որոնք իրենց բնույթով տնտեսական ոլորտի կենսագործունեությունն ապահովող մարմիններ էին:

Իհարկե, ակնհայտ է նմանությունը մերօրյա կառավարման համակարգի հետ: Միաժամանակ, եթե հաշվի առնենք, որ քննարկվող ժամանակաշրջանում զավթողական քաղաքականությունը պետության համար կարևորագույն քաղաքական դավանանք էր, ապա պարզ կդառնա, որ նման պայմաններում խրախուսելի էր ճկուն քաղաքականության վարումը՝ ժամանակավոր ռազմական դաշինքների կնքման առումով: Հետևաբար՝ կարելի է ասել, որ արտաքին քաղաքականությունն անմիջականորեն փոխշաղկապված էր ռազմական հայեցակարգի հետ, ինչի ապացույցները տեսանելի են Կիլիկիայի թե՛ իշխանապետության, թե թագավորության կենսաշրջանում:

Քաղաքական դավանանքի կիրառելիության տեսանկյունից, արտաքին քաղաքականության արժեքավոր դասերը բաժանել ենք երկու սկզբունքային ուղղու-

[1] http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Petakan_karg@_Kilikyan_Hayastanum

թյունների՝ «կամ/կամ» ու «և/և»՝ տալով դրանց ամփոփ բնութագրերը.

- «կամ/կամ». կողմնորոշումը հստակ է, այսինքն՝ առկա է հիմնական գործընկեր միավոր (խաչակիրներ՝ իրենց ներկայացնող պետությամբ և կաթոլիկ եկեղեցով հանդերձ, բյուզանդական կայսրություն՝ ուղղափառ եկեղեցով հանդերձ, իսլամադավան հասարակապետության հարևաններ, մոնղոլական կայսրություն),

- «և/և». քաղաքական դավանանքի հիմքում արտաքին բազմավեկտոր քաղաքականությունն է, իսկ միակ գործընկեր միավորի առումով՝ հստակ կողմնորոշում չկա: Այդ դեպքում փորձ է արվում արտաքին ռազմաքաղաքական դաշտում «խաղալ փակ խաղաքարտերով»՝ փորձելով ձեռք բերել բավարար քանակի գործընկեր միավորներ՝ ըստ փոխշահավետության սկզբունքի, ինչպես նաև բացառել թշնամի ունենալու հեռանկարը:

Գծապատկեր 1-ում ամփոփ կերպով ներկայացրել ենք Հայկական Կիլիկիայի իշխանապետների և թագավորների քաղաքական դավանանքի ընտրությունն ու կիրառումը՝ հիմք ընդունելով ինչպես տվյալ ժամանակաշրջանի իրողություններն ու դրանցից բխող քայլերի տրամաբանությունը, այնպես էլ որոշ պատմագիրների ու պատմաբանների արձանագրումներ:

Գծապատկերում ակնառու են և՛ իշխանապետության, և՛ թագավորության վերելքի ու վայրէջքի ժամանակահատվածները, որոշակի քաղաքական դավանանքի կրողներն ու շարունակականություն ապահովողները: Մասնավորապես՝ տեսանելի են իշխանապետությունից թագավորության անցման փուլը և անկման կորը: Հարկ ենք համարում նշել, որ այս մոտեցումը հիմնված է սեփական համոզմունքների, դատողությունների ու վերլուծությունների և, ինչպես վերը նշեցինք, պատմագրական ու պատմագիտական որոշակի աղբյուրների վրա, ուստի, չլինելով «վերջին ատյանի ճշմարտություն», այդուհանդերձ, կյանքի իրավունք ունի:



Կիլիկիայի իշխանապետության/թագավորության արտաքին քաղաքականության սկզբունքները[7]

Մլեհ իշխանապետի դիվանագիտական հնարքը

Գծապատկեր 1-ում տեսանելի է, որ իշխանապետության վերելքի ամենաակտիվ ժամանակահատվածում Մլեհ իշխանապետը,[2] արտաքին քաղաքականության առումով, կատարել է դիվանագիտական կտրուկ շրջադարձ, այսինքն՝ փոխել է քաղաքական դավանանքի վեկտորը՝ «և/և»-ից կտրուկ անցում կատարելով «կամ/կամ»-ի: Մլեհ իշխանապետի այս արտասովոր քայլն ընդգծված կերպով տարբերվում է նախորդ չորս և հաջորդ երկու իշխանապետների վարած քաղաքականությունից, քանի որ վեջիններս պահպանում էին «և/և»-ի սկզբունքը, ինչը պետության զարգացման հաջող ընթացքի գրավականն էր:

Ո՞րն էր խնդիրը: Ի՞նչ հիմնական նպատակ էր հետապնդում Մլեհը՝ որպես գործընկեր ընտրելով և փաստաթղթով ամրագրելով իսլամադավան միավորի, այս դեպքում՝ Հալեպի սուլթանությունը: Չմոռանանք, որ խոսքն այն ժամանակահատվածի մասին է, երբ խաչակիրները ոչ միայն թելադրող ուժ էին տարածաշրջանում, այլև աննահանջ հակառակորդ բոլոր իսլամական հասարակապետությունների կամ միավորների համար, և Մլեհի «կտրուկ շրջադարձն» ուղղակի կարող էր թշնամական հարթակ հրավիրել խաչակիրներին, այսինքն՝ Արևմուտքին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ պատմագիրների հիմնական հովանավորը տվյալ ժամանակահատվածում և ընդհանրապես հայկական եկեղեցին էր, քանի որ ուսյալները հենց «ճեմարանական ինստիտուտի» ներկայացուցիչներն էին, և նրանց աշխատանքը հիմնականում անցնում էր եկեղեցու «վերահսկելի մաղի» միջով, ուստի, Մլեհ իշխանապետի արտաքին քաղաքական դավանանքի առումով, մեզ հասած տեղեկությունները ներկայացված են ՀԱԵ[3] տեսանկյունից, հետևապես՝ քիչ աղերսներ ունեն իրողության հետ: Իսկ իրողությունն անկասելի ընթացքի ապահովումն էր իշխանապետությունից դեպի թագավորություն, և այդ գաղափարի հիմնական կրողներից էր փորձառու ռազմագետ Մլեհը, որը, ի դեպ, նաև իսլամական հասարակապետության յուրահատկությունների գիտակ էր, քանի որ որոշակի ժամանակահատված ծառայել էր հենց Հալեպի սուլթանությունում (աթաբեկություն)[4]: Մլեհի արտաքին դիվանագիտական հնարքն այն ուսանելի դեպքն է, երբ հանուն իշխանապետության շահի, հանդուգն այդ շրջադարձը հանգեցրեց փոխշահավետ համաձայնության տարածաշրջանային ազդեցիկ ուժերից մեկի՝ Հալեպի սուլթանության (աթաբեկության) տիրակալ Նուր ալ Դինի[5] հետ, որի արդյունքում ձևավորված գործընկերային վստահությունը թույլ տվեց ամրապնդել ՀԱԵ-ի սասանված դիրքերը և՛ իշխանապետությունում, և՛ տարածաշրջանում: Խընդիրն այն էր, որ ՀԱԵ կաթողիկոսի աթոռանիստը տվյալ ժամանակահատվածում տեղակայված էր Հռոմկլայում, որը, տարածքային առումով, Հալեպի սուլթանությունում էր: Մլեհի կողմից սուլթանի չեզոքության (լոյալության) ապահովումը այլադավան կրոնական միավոր հայկական եկեղեցու նկատմամբ միակ ճշգրիտ հաշվարկված ճանապարհն էր դեպի թագավորության հիմնում, քանի որ ՀԱԵ-ն դեպի թագավորություն գործընթացի չափազանց կարևոր բաղադրիչ էր՝ հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանում պետական միավորի կառուցվածքային յուրահատկությունը: Նման քաղաքականությունը, իհարկե, պայմանավորված էր ոչ թե անձնական շահով, այլ պետականամետ մտածողությամբ: Հետահայաց վերլուծությունը ցույց է տալիս, որ Մլեհն իր այս քայլով, ինչպես նաև Սիսը որպես Կիլիկիայի իշխանապետության մայրաքաղաք հռչակելով, ամուր հիմք ստեղծեց թագավորության հիմնադրման գործընթացը հաջողությամբ պսակելու համար: Անավարտ մնացածն իր տրամաբանական ավարտին հասցրին նրան հաջորդող

[2] Մլեհ՝ Կիլիկիայի իշխանապետ (1169-1175 թթ.), Ռուբինյան իշխանապետ Լևոն Ա-ի (1129-1137թթ.) որդին, իշխանապետ Թորոս Բ-ի (1145-1169 թթ.) եղբայրը:

[3] Հապավում ՀԱԵ՝ Հայ առաքելական եկեղեցի:

[4] Հետագայում՝ Սիրիայի Այուբան սուլթանություն (1181-1268 թթ.):

[5] Ա.Հովհաննիսյան, Մլեհ Ռուբինյան. Իշխանապետ Կիլիկիո հայոց, http://publishing.ysu.am/files/Mleh_Rubinyan.pdf

Ռուբեն Գ-ն և Լևոն Բ Մեծագործը, որոնք, իսլամական թևում շահելով այնքան կարևոր ռազմական դադարի տարիներ, ընդամենը երկու տասնամյակում կարողացան հզորացնել պետությունը և արտաքին քաղաքականությունում վերադառնալ ժամանակավորապես ընդհատված «և/և» փրկարար դավանանքին:

Իշխանապետ Մլեհի կտրուկ շրջադարձն արտաքին քաղաքական դաշտում ժամանակավոր ռազմական դաշինքի սկզբունքի կիրառման դասական օրինակ է, որը, ռիսկային լինելով հանդերձ, ուներ խորքային գերնպատակ, և պատմությունը ցույց տվեց, որ պետականակերտման առումով, դա ճշգրիտ հաշվարկված և, իհարկե, արդյունավետ գործողություն էր՝ վերջնարդյունքի տեսանկյունից: Արձանագրենք, որ արտաքին դիվանագիտական քաղաքականության մեջ, Հայկական Կիլիկիայի իշխանապետների ու թագավորների կողմից «կամ/կամ» սկզբունքի կիրառելիության առումով, Մլեհի «շրջադարձը» միակ արդարացված քայլն էր: Մնացած դեպքերում այս սկզբունքի կիրառումն ավելի շատ խնդիրներ է առաջացրել, քան թե տվել լրջագույն հարցերի սպառիչ պատասխաններ:

«Եվ/և»-ի արդյունավետությունն իշխանապետությունից դեպի թագավորություն անցման ժամանակաշրջանում

Եվ տրամաբանական, և անհերքելի է այն փաստը, որ Կիլիկիայի թագավորության հիմնադրման գործընթացի հաջողության հիմնական գրավականներից մեկը Խաչակրաց արշավանքների պատեհ քաղաքական «ալիքի» արդյունավետ օգտագործումն էր: Քանի որ Արևմուտքի վերոնշյալ աշխարհաքաղաքական ծրագրի թիրախն իսլամական աշխարհն էր, Կիլիկիայի իշխանապետներն այս համատեքստում կարողացան բանեցնել ճկուն և նպատակային մարտավարություն՝ իրագործելով իրենց նպատակը:

Թեև Խաչակրաց արշավանքները որևէ տեսանկյունից չէին օժանդակում առաքելական կրոն դավանող իշխանապետության զարգացմանը, այդուհանդերձ, արձանագրենք, որ Կիլիկիայի իշխանապետները, օգտվելով խաչակիրների, Բյուզանդիայի և իսլամական աշխարհի հակասություններից, կարողացան ճշգրտորեն հաշվարկել արտաքին վտանգներն ու ռիսկերը և իշխանապետությունը վերածնել թագավորության: Այդ առումով, հատկապես ուսանելի և յուրահատուկ է անկում ապրող Բյուզանդիայի հետ ունեցած հարաբերությունների պատմությունը:

Ուղղափառ Բյուզանդիայի «թուլացող մամլիչը» և կաթոլիկ կրոնը տարածաշրջան «ներարկող» խաչակիրների հետ ունեցած հիմնական կրոնական հակասությունները հայ իշխանապետներին թույլ էին տալիս խաղալ սեփական «խաղը», որը, չնայած վտանգներին ու ռիսկերին, դրական արդյունք գրանցելու մեծ հավանականություն ուներ: Հենց այս առումով էլ պետք է արժևորել ՀԱԵ-ի դերը, որը, նախ և առաջ, ելնելով եկեղեցապահպան իր շահերից, ներքին հաղորդակցման ցանցով ակտիվ նամակագրական կապի մեջ էր արևմտյան հիմնական դերակատար պետությունների կրոնական կառույցների և, իհարկե, Հռոմի պապի հետ: Այդ ակտիվ կապի հիմնական մղիչ ուժն առաքելական կրոնական կառույցի ինքնապահպանման բնազդն էր, որը, սակայն, այդ պահին համընկնում էր Կիլիկիայի իշխանապետությունը որպես թագավորություն ճանաչելուն միտված ռազմավարության հետ ու անհրաժեշտ «միս ու արյուն» տալիս գործընթացին՝ իբրև պետականակերտման կարևոր ու անհրաժեշտ բաղադրիչ:

Հարկ է նշել, որ հատկապես Լևոն Բ Մեծագործ իշխանապետը[6], որը հետագայում հռչակվեց թագավոր, արտաքին դիվանագիտական քաղաքականության մեջ, «և/և»-ի քաղաքական դավանանքի սկզբունքը կիրառելու համատեքստում, արդյունավետ օգտագործեց ՀԱԵ-ի ներուժը: Միաժամանակ, Լևոն Բ Մեծագործը հավասարակշռված արտաքին քաղաքականություն էր վարում ինչպես խաչա-

[6] Կիլիկիայի իշխանապետը՝ 1187–1198 թթ. և ապա թագադրված թագավորը՝ 1198-1219 թթ.:

կիրների, այնպես էլ նրանց տարածաշրջանային «ախորժակին» դեմ գնացող իսլամական հասարակապետությունների կարևոր «խաղացողների» հետ: Ընդհանրապես, Լևոնն Բ Մեծագործի կառավարման ժամանակահատվածը Կիլիկիայի իշխանապետության և թագավորության ամենակարևոր շրջանն էր, երբ բացահայտվեցին նրա բացառիկ կառավարչական հմտությունն ու տաղանդն արտաքին քաղաքականության ոլորտում: Լևոն Բ Մեծագործը կարողացավ հաշվեկշռել ինչպես խաչակիրների, այնպես էլ իսլամական կարևորագույն խաղացողների հետ արտաքին դիվանագիտական դաշտը: Հատկապես ուսանելի է նրա դիվանագիտական ձեռքբերումը տարածաշրջանի հզոր և ազդեցիկ միավորներից մեկի՝ Իկոնիայի սելջուկյան սուլթանության (1077-1272 թթ.) հետ: Տվյալ ժամանակահատվածն իսկապես հագեցած էր տարածաշրջանային որոշիչ տեղաշարժերով: Մասնավորապես՝ խաչակիրների 3-րդ, 4-րդ և 5-րդ արշավանքներին զուգահեռ[7], շարունակվում էր Բյուզանդական կայսրության անկումը, միաժամանակ, դեռևս չթուլացած խաղացող էր համարվում խաչակիրների հովանու ներքո ստեղծված Անտիոքի դքսությունը (1099-1268 թթ.), և հզորանում էին սելջուկյան տիրապետության երկրները (Իկոնիայի և Սիրիայի սուլթանություններ), որոնք գոյաբանական վտանգ էին սպառնում հայերին և, հետևապես, Կիլիկիայի իշխանապետությանը, որը Լևոն Բ Մեծագործի օրոք շարունակում էր տարածքների նվաճողական և վերահսկողական քաղաքականությունը: Վերջին կետը, նախ և առաջ, վերաբերում էր Անտիոքի դքսությանը, որտեղ Լևոն Բ Մեծագործը ձգտում էր լիակատար վերահսկողություն սահմանել: Այս հարափոփոխ խճապատկերում նա պետք է լիներ հնարավորինս իրատես ու զգուշավոր հատկապես այն երկրների հանդեպ, որտեղ տարածքային վեճերն անխուսափելի էին: 1218 թվականին հարևան Իկոնիայի սուլթանության տարածքների նկատմամբ նվաճողական ռազմական հաջողություններից ու նաև մի քանի անհաջողություններից հետո, Լևոն Բ Մեծագործն Իկոնիայի սուլթան Իզզ Էդ-դին Քեյ-Քավուսիի (1211-1220 թթ.) հետ կնքում է հաշտության պայմանագիր[8], որը, ռազմավարական առումով, արդարացված էր, քանի որ, անկախ որոշակի զիջումներից, կրում էր բարեկամական և փոխշահավետ համագործակցության բնույթ:

Այսպիսով՝ իր կառավարչական գործունեության մայրամուտին Լևոն Բ Մեծագործին հաջողվեց չեզոքացնել այնպիսի հզոր հարևանի թշնամական նկարտումները, ինչպիսին էր Իկոնիայի սուլթանությունը: Միաժամանակ, նա պահպանեց Անտիոքի դքսության հետ փոխշահավետ ռազմաքաղաքական դաշինքը, որի օգտակարությունն ու կենսունակությունը երևացին հատկապես մոնղոլական արշավանքի ժամանակ: Սա Կիլիկիա պետության քաղաքական դավանանքում «և/և» սկզբունքի կիրառման դասական օրինակ է ու չափազանց ուսանելի այժմ՝ սեփական պատմությունից դասեր քաղելու տեսանկյունից:

Իհարկե, Իկոնիայի սուլթանության հետ պայմանագիրը, որն իր տեսակով առաջինն էր, ժամանակավոր զիջումների որոշակի չափաբաժին էր պարունակում և, կարծես թե, կախյալ վիճակ ստեղծում Կիլիկիայի թագավորության համար, սակայն, շահելով դադարի՝ այնքան թանկ ժամանակը ու ռազմական հզորություն ունեցող պետության հետ հարաբերությունները թեկուզև ժամանակավորապես տանելով բարեկամական համագործակցության դաշտ, Լևոն Բ Մեծագործը կայուն հիմք ստեղծեց հետագա կառավարիչների համար՝ առավել անկախացնելու Կիլիկիայի հայկական թագավորությունը, ինչին ձեռնամուխ եղավ նրա քաղաքական դավանանքի սկզբունքները կիրառող լավագույն հետնորդներից մեկը՝ Հեթում Ա թագավորը (1226-1269 թթ.):

[7] Խաչակրաց 3-րդ արշավանք՝ 1187 թ., չորրորդ՝ 1202 թ., հինգերորդ՝ 1215 թ.:

[8] Ա.Հովհաննիսյան. Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև կնքված հաշտության պայմանագրի շուրջ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, http://www.armin.am/images/menus/2392/ARAM_HOVHANNISYAN_1218.pdf

Հեթում Ա թագավորի «մոնղոլական» խաղաքարտը

Հեթում Ա-ի թագավորության շրջանը Կիլիկիայի թագավորության գոյության ողջ ընթացքում այն եզակիներից է, երբ արտաքին հարաբերությունների «գունեղ ներկապնակը» կրում էր երկրի ներսում աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միասնականության ու իրար փոխլրացնող քաղաքականության կարևոր բաղադրիչ «գույնը»: Այդ առումով, կարելի է արձանագրել, որ հենց այդպիսի բարենպաստ իրավիճակն էր ի զորու ապահովելու երկրի անվտանգության բարձր մակարդակն ու ներքին կայունությունը: Դա, իհարկե, որոշիչ ազդեցություն ունեցավ նաև արտաքին քաղաքական դավանանքի սկզբունքի ընտրման և կիրառման ժամանակ: Հեթում Ա-ի կառավարումը համընկավ տարածաշրջանային խայտաբղետ «կտավի» վրա մոնղոլական ընդգծված «վրձնահարվածների» հետ: Ասիական տափաստանների նոր հեգեմոնը, իր նվաճողական «շոշափուկները» Միջին Ասիայից հասցնելով Մերձավոր Արևելք, փորձ էր անում գծելու սեփական տիրապետության նորացվող սահմանները հենց խաչակիրների «քթի տակ», ինչ-որ տեղ կանխարգելելով Խաչակրաց արշավանքները դեպի արևելք խորացնելու արևմտյան «մեգանախագծի» միտումները: Այս գործընթացը չէր կարող շրջանցել Հայկական թագավորությունը, քանի որ խոսքը հենց այն տարածաշրջանի մասին էր, որտեղ կայանում էր Կիլիկյան թագավորությունը: Միաժամանակ, Երուսաղեմի թագավորության թուլացումը, ապա նաև կանխորոշված անկումը[9] սահմանափակում էին քրիստոնյա Արևմուտքի ներկայությունը հարավում, անկանխատեսելի դարձնելով եգիպտական պետության նկրտումները դեպի վեր՝ Մերձավոր Արևելքի քրիստոնյա միավորներ: Ծանր ժամանակներ էր ապրում նաև Անտիոքի դքսությունը, որը Կիլիկիայի թագավորության ռազմաքաղաքական դաշնակիցն էր և, ըստ էության, ավելի շատ վերջինիս պատասխանատվության տիրույթում էր, քան կիրառելի իրավունքի: Հեթում Ա-ն, հաշվարկելով տարածաշրջանային ռիսկերը, համակցելով իր ռազմավարությունն Անտիոքի իշխանությունների հետ, նախընտրեց «մոնղոլական» ժամանակավոր ռազմաքաղաքական դաշինքի կնքման ճանապարհը: Դարակազմիկ վերակերպումներ էին ապրում նաև Հալեպի Այուբան և Իկոնիայի սելջուկյան սուլթանությունները, որոնք մոնղոլական արշավանքների հետևանքով դադարեցին գոյություն ունենալ այդ ձևաչափով[10] և լինել Կիլիկիա պետության համար գոյաբանական վտանգի հիմնական աղբյուր: Միաժամանակ, բացի մոնղոլների ձեռքով «կրակից տաք շագանակներ հանելու» քաղաքականությունից, այդ ժամանակավոր ռազմական դաշինքը զերծ պահեց Կիլիկիան մոնղոլների մահաբեր ասպատակումից, ու չնայած եգիպտական Մամլուքյան պետության ծնունդին, որը սկզբնավորվեց դարձյալ Հեթում Ա-ի գահակալման ժամանակաշրջանում, այդուհանդերձ, որոշակի ժամանակահատված Կիլիկիայի թագավորությունը վայելեց արտաքին ու ներքին անվտանգությամբ աչքի ընկնող ներդաշնակ կյանք: Մոնղոլների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը մասնակցում էր նաև թագավորի եղբայրը՝ Սմբատ Սպարապետը, որը 1247 թվականին մեկնեց մոնղոլական կայսրության մայրաքաղաք Կարակորում՝ թագավորի նախատեսվող այցի կազմակերպման և բանակցությունների հիմնական ուղղությունների ճշգրտման նպատակով[11]: Այդ այցի շրջանակում նախատեսվում էին քննարկումներ մի շարք հարցերի շուրջ, մասնավորապես՝ տարածքային հիմնախնդիրներ (հատկապես Իկոնայի սուլթանության կողմից գրավված տարածքների վերաբերյալ) և ՀԱԵ-ի կարգավիճակի հստակեցում (քանի որ մոնղոլներն ընդգծված հակաքրիստոնեական պահվածք

[9] Երուսաղեմի թագավորության կառավարական կառուցվածքի պատմություն. Երուսաղեմի թագավորություն. հիմքը և կյանքը թագավորության մեջ. Երուսաղեմի թագավորության ոսկե տարիները, https://srcaltufevo.ru/hy/istoriya-struktura-upravleniya-ierusalimskogo-korolevstva.

[10] Մութաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 47-48:

[11] Դ. Թինոյան, Հեթում Ա-ի մոնղոլական քաղաքականությունը մոնղոլական կայսրության ձևավորման շրջանում, http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/D.Tinoyan.pdf

չէին դրսևորում, չէր բացառվում նրանց վերահսկելի ներկայության ժամանակ ՀԱԵ-ի ազատ գործելու հնարավորությունը): Բանակցային վերոնշյալ փաթեթն էր, որ Հեթում Ա-ն մտադիր էր քննարկել մոնղոլ կայսր Մանգուի (Չինգիզ խանի թոռը) հետ[12]: Ճանապարհորդությունն ուշագրավ էր նրանով, որ անցնելու էր Մեծ Հայքի տարածաշրջանով և տևելու էր գրեթե չորս ամիս: Ընդ որում, Մեծ Հայքի արևելյան հատվածում դեռևս գոյատևող հայկական աշխարհիկ և հոգևոր իշխանությունները, համաձայն պատմագիր Կիրակոս Գանձակեցու ((1200-1271 թթ.), որն ի դեպ այդ ճանապարհորդության ընթացքում Արագածոտն գավառի Վարդենիս գյուղում հանդիպում է Հեթում Ա-ին)[13], զգուշանում էին Կիլիկիայի թագավորի հետ շփումներից: Մինչդեռ, ըստ նույն վկայության, թագավորի հետդարձի ժամանակ իրավիճակը բոլորովին այլ էր. ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանության ներկայացուցիչները նրան դիմավորում էին բարձրաշնորհ հյուրընկալությամբ: Դա, անշուշտ, հավաստում է այն մասին, որ Հեթում Ա-ն հաջողել էր «մոնղոլական» ռազմաքաղաքական և դիվանագիտական առաքելության մեջ: Եվ իսկապես, 50 օր հյուրընկալվելով Մանգու կայսեր կողմից՝ նա կնքել էր ցանկալի դաշինքը[14], ստացել ՀԱԵ-ի ազատ գործելու վերաբերյալ հրովարտակ: Սրանք, անկասկած, Կիլիկիայի թագավորության կայուն զարգացման տեսանկյունից, մեծ ձեռքբերումներ էին[15]:

Կարող ենք արձանագրել, որ մոնղոլական ռազմաքաղաքական դաշինքը «և/և»-ի ևս մեկ դասական օրինակ է, որն իրապես խառնակ ժամանակաշրջանում Կիլիկիայի թագավորությանը զերծ պահեց ռազմական ծանր բախումներից և գոյաբանական վտանգից:

Արտաքին քաղաքական դավանանքի «և/և» սկզբունքի կիրառման վերջին «մոհիկանը» Հեթում Ա-ի որդի Լևոն Գ-ն էր (1269-1289 թթ.), որի գահակալման ժամանակ գոյաբանական լրջագույն սպառնալիք էր Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը՝ իր նվաճողական քաղաքականությամբ: Չանտեսելով այն հանգամանքը, որ Արևմուտքը կարող էր դժգոհել, Լևոն Գ-ն, այդուհանդերձ, հաշտության 10-ամյա պայմանագիր (1285 թ.) կնքեց Մամլուքյան սուլթանության հետ: Դա ժամանակ շահելու, ինչպես նաև արտաքին առևտրային ուղիներն արդյունավետ կերպով օգտագործելու առումով, իսկապես արդարացված գործարք էր:

Հայկական Կիլիկիայի հետագա թագավորները դանդաղ, բայց հաստատուն քայլերով անցում կատարեցին արտաքին քաղաքական դավանանքի «կամ/կամ» սկզբունքին՝ ամբողջապես ապավինելով Արևմուտքին: Նման միակողմանի արտաքին քաղաքականությանն անցնելու ծանր ու կործանարար հետևանքները՝ հատկապես իսլամական հասարակապետությունների ակտիվ ներկայությամբ «համեմված» տարածաշրջանում, երկար սպասեցնել չտվին:

Վերադարձ «կամ/կամ»-ին. մայրամուտի մոտեցող «շունչը»

Վերստին անդրադառնալով գծապատկեր 1-ին՝ կարող ենք արձանագրել, որ, սկսած Հեթում Բ թագավորից, արտաքին

[12] https://www.oxfordreference.com/display/10.1093/oi/authority.20110803100130702

[13] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 450:

[14] 1254 թվականին Կարակորումում կնքված մոնղոլա-հայկական խաղաղության, բարեկամության ու փոխօգնության պայմանագիրը բաղկացած էր հինգ գլխավոր կետերից՝
1.Կողմերը պայմանավորվում էին պատերազմի ժամանակ միմյանց օգնել: Կիլիկյան Հայաստանն օգնում է մոնղոլներին Միջագետքը, Սիրիան ու Պաղեստինը գրավելու գործում, իսկ մոնղոլները պարտավորվում են պաշտպանել Կիլիկյան Հայաստանն Իկոնիայի, Եգիպտոսի և շրջակա իսլամադավան մյուս պետությունների հարձակումներից:
2. Միմյանց միջև հաստատվում են հավերժական բարեկամություն և խաղաղություն:
3. Առանց Կիլիկյան Հայաստանի պետության համաձայնության ու պահանջի, մոնղոլական զորքն ու պաշտոնյաները իրավունք չէին ունենում անցնելու Կիլիկյան Հայաստանի սահմանները:
4. Նախկինում հայոց պետությանը պատկանած այն հողերը, որոնք այդ ժամանակ գտնվում էին Մոնղոլիայի տիրապետության տակ, վերադարձվում էին Հայաստանին:
5. Մոնղոլիան իր կայսրության ամբողջ տարածքում հայոց եկեղեցուն շնորհում էր անձեռնմխելիություն և բոլոր տեսակի հարկերից ազատման արտոնություններ:

[15] Դ. Թինոյան, Հեթում Ա-ի մոնղոլական քաղաքականությունը մոնղոլական կայսրության ձևավորման շրջանում, http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/D.Tinoyan.pdf

դաշնակցի ընտրության առումով, իրականացվել է միակողմանի կոշտ քաղաքականություն: Ընդ որում, դրան զուգահեռ, դադարել է գործել ժամանակավոր ռազմական դաշինքների պատմականորեն արդարացված սկզբունքը: Իհարկե, այս պարագայում արտաքին քաղաքականության բազմակողմանի վեկտորների միահյուսումն ուղղվել է միայն դեպի Արևմուտք՝ պայմանավորված, նախ և առաջ, մոնղոլ-թաթարական կայսրության մեջ «թաթարական» բաղադրիչի կշռի էական մեծացմամբ: Այսինքն՝ իսլամական դավանանքին միտված ընդգծված քաղաքականություն վարման այդ պարագայում կարող էր վտանգվել կայսրության չեզոքությունը հատկապես քրիստոնյա պետությունների նկատմամբ, ինչն էլ որոշիչ դեր խաղաց Հեթում Բ-ի վերջնական կողմնորոշման համար: Այս իրավիճակը, ինչպես և սպասվում էր, հանգեցրեց Մոնղոլական կայսրության հետ կնքված դաշինքի փլուզմանը, և Հեթում Բ թագավորն ու արքունիքի մեծ մասը Կիլիկիայի թագավորության համար որպես փրկարար օղակ համարեցին Արևմուտքը՝ ամրագրելով քաղաքական դավանանքի «կամ/կամ» սկզբունքը:

«Կամ/կամ» քաղաքականության հետևանքով մահմեդական հարևանների հետ հարաբերություններն էլ ավելի սրվեցին՝ զուգակցվելով թագավորության տարածքների հանդեպ նվաճողական նկրտումներով: 1292 թվականին եգիպտական զորքերը գրավեցին Հռոմկլան՝ գերեվարելով Ստեփանոս Դ Հռոմկլայեցի կաթողիկոսին: Նոր կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցին (1293–1307 թթ.) կաթողիկոսական աթոռը հարկադրաբար տեղափոխեց Սիս:

Ինքնին հասկանալի է, որ Կիլիկիայի թագավորության պահպանման գինը շատ բարձր էր. Արևմուտքը և հատկապես Վատիկանը առաջարկում էին կոշտ պայմաններ, մասնավորապես՝ կաթոլիկ կրոնի պետականորեն ընդունում: Նման պահանջ-պայմանի առկայությունն արդեն իսկ յուրաքանչյուր թագավորի զրկում էր արտաքին քաղաքական հարթակում ճկունություն դրսևորելու ու մանևրելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ տրամաբանական է, որ Արևմուտքի ակտիվ միջամտությամբ և օժանդակությամբ հայկական պետության թագավորական գահին սկսեցին բազմել արևմտամետ (լատինամետ) թագավորներ: Մի խոսքով, արքունիքն ամբողջապես դարձավ արևմտամետ:

Այս ամենին հաջորդեց «կամ/կամ» սկզբունքի առավել կոշտ կիրառման ժամանակահատվածը, երբ երկիրը սկսեցին կառավարել կաթոլիկ հավատքի հետևորդ թագավորներ՝ կրոնական խիստ հակասության մեջ մտնելով ՀԱԵ-ի հետ: Ներքին միջավայրը դարձավ անմիաբան՝ պալատական մեծ ու փոքր խարդավանքներով հագեցած: Այս ամենի հետևանքով Հեթումյանների արքայատոհմը կորցրեց ժառանգականության սկզբունքի կիրառման հնարավորությունը...

Վերոնշյալ իրողություններն ու «և/և»-ից ինքնակամ հրաժարումը բացասաբար անդրադարձան պետության կողմից վարվող արտաքին բազմակողմ հարաբերությունների քաղաքականության վրա, և արևելյան թիկունքի «մերկացումը» հնարավորություն տվեց տարածաշրջանային հարևան իսլամական հասարակապետություններին ոչ միայն թագավորությունից «պոկելու» ռազմավարական տեսանկյունից թանկագին ու կարևոր տարածքներ, այլև շարժվելու ավելի առաջ՝ սպառնալով հենց թագավորության գոյությանը:

Շարունակական խարդավանքների և պարբերական գահախլումների ժամանակահատվածը լիարժեքորեն օգտագործեցին Եգիպտոսի սուլթանությունն ու հարևան ամիրայությունները, որոնց զորքերը ներխուժեցին Կիլիկիայի թագավորության արևելյան շրջաններ՝ նվաճելով Հումուս, Թիլ, Համդուն, Կվայրան, Նողայր, Մարաշ և այլ բերդաքաղաքներ: Սրանք թագավորության անկման առաջին չարագույժ «ծիծեռնակներն» էին, որոնք, ցավոք, միակը չէին:

Փորձելով պահպանել իրենց դիրքը՝ Հեթումյանները որոշեցին գնալ ծայրահեղ քայլի. 1307 թ.-ին մայրաքաղաք Սիսի Սրբ. Սոֆիա մայր տաճարում կայացած համա-

ժողովում Լևոն Դ Հեթումյանը[16] քննարկման դրեց Արևմուտքի և Հռոմի Պապի՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցուն միանալու առաջարկ-պահանջը: Արքունիքի ճնշմամբ Պարոնների ժողովը դա ընդունեց: Ինչպես և ակնկալվում էր, աշխարհիկ ու հոգևոր իշխանավորների մի հատվածը և ՀԱԵ-ի հավատավոր հոտը ընդվզեցին, որի հետևանքով եկեղեցիների միավորման որոշումը մնաց թղթի վրա[17]:

Լևոն Ե-ի (1320-1342 թթ.) մահից հետո Հեթումյաններն անվերադարձ կերպով կորցրին հայոց արքայի գահը և արևմտամետ հայ ունիթորներն[18] այն հանձնեցին Կիպրոսի Լուսինյանների արքայատան ներկայացուցիչ Գվիդոնին (Կոնստանդին Գ՝ 1343-4344 թթ.), որը, կաթոլիկ լինելուց բացի, միայն մայրական կողմից էր հայ[19]: Այդպես էլ չդառնալով միապետական կաթոլիկ երկիր, վերահսկելի ու վստահելի տարածաշրջանային միավոր, դեմ գնալով Արևմուտքի ու Վատիկանի պահանջին, ըստ էության, Կիլիկիայի թագավորությունը թևակոխեց արագ անկման ժամանակաշրջան:

Արդեն XIV դարի միջնամասում երկրի զգալի մասը զավթել էին եգիպտական մամլուքներն ու տարածաշրջանում աշխուժացող թուրքմենները:

Հայոց վերջին թագավորության անկմանը գործուն կերպով օժանդակում էր նաև Հալեպի ամիրայությունը:

Կիլիկայի հայոց թագավորության վերջին օրինական (լեգիտիմ) թագավորը կաթոլիկ Լևոն Զ Լուսինյանն էր[20], որն անկում ապրող թագավորության գլխավոր կառավարչի դասական օրինակ էր՝ իր ապրած կյանքով ու գործունեությամբ:

Կարող ենք արձանագրել, որ Կիլիկիայի թագավորության արագ անկմանն օժանդակող մասնակիցները հենց նրանք էին կամ նրանց իրավահաջորդները, որոնք կիրառում էին արտաքին քաղաքական դավանանքի «և/և» սկզբունքը՝ տարբեր համաձայնագրերի/դաշինքների կնքմամբ:

Այսպիսով՝ Հայկական Կիլիկիայի անցած ճանապարհի ուսումնասիրությունը ցույց է տալիս «կամ/կամ» ու «և/և» սկզբունքների դերն ու նշանակությունը՝ տարածքային առումով ոչ այնքան մեծ պետության համար նախընտրելի արտաքին խաղի կանոնների կիրառման համատեքստում: Ներկայիս հայկական պետությունը նույնպես շրջապատված է աշխարհիկ և կրոնական խայտաբղետ իշխանություններով շաղկապված հարևանների խմբով: Ըստ էության, խաղասեղանը նույնն է, և խոշոր խաղացողների համար խաղի կանոններն էլ մնացել են անփոփոխ՝ աշխարհաքաղաքական նպատակադրումների ու մեգածրագրերի առումով: Անշուշտ, փոխվել են ձևակերպումները՝ «փաթեթավորվելով» ժամանակակից եզրաբանությամբ, ինչպես նաև իրավունքների ու պարտավորությունների նորառոճ ձևակերպմամբ:

Իզուր չէ ասված՝ պատմության ընթացքը պարույրաձև է, և այն կրկնվելու հատկություն ունի: Անկախ աշխարհագրական դիրքից, տարածքի, մարդկային ու բնական ռեսուրսների չափերից, աշխարհաքաղաքական հարթակում հաջողել ու հաջողելու են միայն նրանք, ովքեր ունակ են ինքնուրույն վերլուծելու սեփական պատմությունը, դասեր քաղելու դրանից՝ վեր հանելով իրենց հաջողությունների և, որ ավելի կարևոր է, անհաջողությունների հիմնական օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները, քննելով ճակատագրական պահերին ընդունված բախտորոշ որոշումների հիմնավորումներն ու շարժառիթները, մի խոսքով, նրանք, ովքեր ունակ են քայլելու ծանրագույն սխալներն այլևս չկրկնելու՝ ոչ դյուրին, բայց միակ նախընտրելի ճանապարհով:

[16] Հեթում Բ-ի մանկահասակ եղբորորդին, որի խնամակալը Հեթում Բ-ն էր:

[17] Լևոն Դ-ին հաջորդած Օշին Ա-ն (1308–20 թթ.) Հռոմի պապի պահանջով 1309 թ.-ին հրավիրում է նոր ժողով՝ Սիսի ժողովի որոշումները վերաքննելու և կենսագործելու համար: Հանդիպելով ազգային ուժերի համառ դիմադրությանը՝ Օշին Ա-ն առժամանակ դադարեցնում է կրոնական վեճերը:

[18] Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ քրիստոնեական տարբեր եկեղեցիների միության (ունիայի) գաղափարի վրա հիմնված եկեղեցական ուղղության կրողների խումբ, որն ընդունում էր Հռոմի պապի գերագահությունը, կաթոլիկական դավանանքն ու եկեղեցական ծեսը՝ պահպանելով միայն ժամերգության ազգային լեզուն:

[19] Գվիդոնի մայր Զաբելը՝ Լևոն Գ Հեթումյանի դուստրը: 1343 թ.-ին Գվիդոնը հայկական ծեսով օծվում է հայոց թագավոր՝ ստանալով Կոստանդին Գ անունը, շարունակում է իր նախորդի արևմտամետ քաղաքականությունը՝ դրանով իսկ առաջացնելով ոչ միայն արտաքին արևելյան խաղացողների, այլև սեփական ժողովրդի դժգոհությունը:

[20] Լուսինյանների արքայատան ներկայացուցիչ Կիպրոսի գահաժառանգ Ամորի Լուսինյանի և Լևոն Գ-ի դուստր Զաբելի որդի Ջիվանի ու վրաց արքայադուստր Սոլդանանի որդին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Եր., 1979, 719 էջ:
2. Հովհաննիսյան Ա., Մլեհ Ռուբինյան. Իշխանապետ Կիլիկիո հայոց, http://publishing.ysu.am/files/Mleh_Rubinyan.pdf
3. Հովհաննիսյան Ա., Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև կնքված հաշտության պայմանագրի շուրջ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, http://www.armin.am/images/menus/2392/ARAM_HOVHANNISYAN_1218.pdf
4. Մութաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001, 142 էջ:
5. Դ. Թինոյան, Հեթում Ա-ի մոնղոլական քաղաքականությունը մոնղոլական կայսրության ձևավորման շրջանում, http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/D.Tinoyan.pdf
6. http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Petakan_karg@_Kilikyan_Hayastanum
7. https://www.oxfordreference.com/display/10.1093/oi/authority.20110803100130702
8. Երուսաղեմի թագավորության կառավարական կառուցվածքի պատմություն. Երուսաղեմի թագավորություն. հիմքը և կյանքը թագավորության մեջ. Երուսաղեմի թագավորության ոսկե տարիները. https://srcaltufevo.ru/hy/istoriya-struktura-upravleniya-ierusalimskogo-korolevstva

Амазасп ГАЛСТЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

УРОКИ КИЛИКИ: ЧАСТЬ ЧЕТВЕРТАЯ

Киликийское княжество, а затем и королевство представляет собой замечательный пример изучения как с точки зрения политической идеологии (доктрины), так и внешней и внутренней политики в целом. Находясь в регионально активной зоне и объективно в сопредельной враждебной среде, как в принципах своего государственного устройства, так и в военно-политическом, административном и экономическом уровнях, она несла синтезированное влияние Востока и Запада. Центром государственного управления был Королевский Двор - Аркуник, включавший Совет господ, Верховный суд и исполнительный орган со своими конторами. Аркуник во времена Киликийского княжества возглавлял князь, а с 1198 года – король. Князь/король, как глава государства и верховный хозяин страны был наделен исключительными правами и привилегиями. Под его председательством созывались заседания Совета господ, решения которого, как и законы, утверждались и публиковались от его собственного имени. Князь/король Киликии был главнокомандующим войсками, мог объявлять войну, заключать мир и фактически диктовал основные принципы межгосударственных отношений. В четвертой части цикла статей мы попытаемся проанализировать принципы внешней политики Киликийского княжества/королевства, в том числе военно-политическую концепцию.

Ключевые слова: *Киликийское царство, государственный порядок, политическая идеология, военная концепция, внешняя политика, дипломатия*

Hamazasp GALSTYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

CILICIA LESSONS: PART FOUR

The Cilician principality, and then the kingdom, is a remarkable example of studying both in terms of political ideology (doctrine) and foreign and domestic policy in general. Being in a regionally active zone and objectively in a neighboring hostile environment, both in the principles of its state structure and in the military-political, administrative and economic levels, it carried the synthesized influence of East and West. The center of state administration was the Royal Court - Arquniq, which included the Council of Lords, the Supreme Court and the executive body with its offices. Arquniq, during the time of the Cilician principality, was headed by a prince, and since 1198 - by a king. The prince/king, as head of state and supreme master of the country, was endowed with exclusive rights and privileges. Under his chairmanship, meetings of the Council of Masters were convened, the decisions of which, like laws, were approved and published in his own name. The prince/king of Cilicia was the commander-in-chief of the troops, he could declare war, conclude peace, and in fact dictated the basic principles of inter-state relations. In the fourth part of the series of articles, we will try to analyze the principles of the foreign policy of the Cilician Principality/Kingdom, including the military-political concept.

Keywords: *Cilician kingdom, state order, political ideology, military concept, foreign policy, diplomacy*